ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 1,496 — Կ. ՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏ. 29—11 ՍԵՊՏ. 1901. — 27 ՅՈՒԼԻՍԻ ԻՒ Լ" 1319—29 ՕՂՍՓՈՍ 1317 — ՀՈՐԵԲԵՆԱԿԻ

ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺԱՆԵՐԻՆ
Իսկ նախավճար 18 դրբ.
ՏԱՐԵԿԱՆ » » 7 Մեծ.
ԱՐՏԱՍՈՒԱՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ 26 Ֆր.
» ՎԵՑԱՄՍ. 16 ԵՒՄՍ. 9 Ֆր.
ԱՆԴԵՍ. ԼԻՒՐԱ 119 դրբ. — 20 ՖՐ. ՀԱՅ.
94 ½ դրբ. — ՓՈՒՄԻՆ 55 դրբ.

Բիւզանդիոն

ՀԱՅԱԹԵՐԹ Ա.ՄԵՆՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

"بوزانتيون"
اميجيوبوى وسياسى غزته صاحبه وه مديرمسئولى
بوزانت كچيان
مطبعه دارى خانه سى باب عالى جاده سنده ٢٣-٢٥ نومرو لى دائره

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԵՐԻՆ 6 Մեծ.
ՎԵՑԱՄՍԵԱՅ 3 »
ԵՒՄՍԵԱՅ 1 ½ »
ՀԵՌԱԽՕՍԵԱՅ 20 Փարա
Նոյն պայմանի վրայ գիտցող եւ գրատարի համար՝ ԱՐԾԱԹ ԱՇԽԱՏԱՒԱՐՁ
Թղթատարութիւնը ուղղել հետեւեալ հասցէով՝

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ
ԲԻԻԶԱՆԴ ՔԻՉԵՀԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԱԶԳ. ՀԱՐՑԵՐ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ս.

Վերջին տեղեկութիւնները վեղարաւորաց թիւն օր ըստ օրէ բազմանալով մայրաքաղաքիս մէջ, ամէն հանդիսաւոր առիթներու և չհաւէտ առիթներու պատարագելու պաշտօնն իրենց սեփականացին, և երթէ ատանկ երթալու ըլլայ, դպրաց դասուն հետ համախորհուրդ, և անոնց հրաւէրովը թերևս ամէն կիրակի անձը պատարագեն, և քահանայք միայն լոր օրերը, երբ եկեղեցին գրեթէ ժողովուրդ չըլլար։ Կ'ընդունիմ քարոզի անհրաժեշտ պէտքը նոյն իսկ ամէն կիրակի և տօն օրեր։ բայց այդքանին համար հարկ չկայ որ քարոզիչն անպատճառ պատարագէ և պճնազարդուելով ինքզինքը ցուցադրէ։ Եթէ Թաղական Արհուրդը կ'ուզէն ռէյսմով ժողովուրդն եկեղեցի քաշել, թո՛ղ հրատարակեն թէ այս ինչ քարոզիչն այնինչ նիւթին վրայ քարոզ պիտի խօսի, և այդ բաւական է, այն ատեն հոս քարոզի մրցում մ'ալ բացուած կ'ըլլայ։

Իմ աղայութեանս վեղար փիլոնով ալ կիրակի օրեր քարոզի կ'ելլէին քարոզիչք։ Հիմա սովորութիւն ըրած են, եթէ չպատարագեն, բերաննին կը գոցեն կ'ընան, և կամ չատ չատ ծանուցման առթիւ կամ փաթա ուզելու համար մէկ—երկու խօսք կ'ընեն։ Հոգ չէ թէ այն չաթիռն եկեղեցական պատմութեան մէջ նշանաւոր դէմքերու, յիշատակելի եղելութիւններու վրայ խօսելիք չանհկան նիւթեր ըլլան օրուան Աւետարանին և ընթերցուածոց մէջ, հաւատացելոց բարոյ ուղղութեան և մխիթարութեան և հոգեւոր վրկութեան ժամին ընտիր կտորներ ըլլան բացատրելիք և ընդլայնելիք։ Եթէ քարոզչի ամսական կ'առնուն, պարտաւոր են ամէն կիրակի քարոզ խօսիլ, բայց օրինաւոր քարոզ, և ո՛չ թէ պզտան ալմ, հազար անգամ կրկնուած խօսքեր, ափեղցիկով պարբերութիւններով հաւեծուած։ Ո՛չ չատ կարճ՝ 10 վայրկեան չափ, ոչ ալ չատ երկայն, մանաւանդ ամառը, այլ կէս ժամու չափ, առ առաւելն երեք քառորդ ժամ քաջ և ժողովրդական առնելաձևի համար։

*** Թանք մեր կղզիին. մեր մեծ աղաները, ըստ ընկալեալ սովորութեան, չատ ուզեցին որ վեղարաւոր մը ճաշին Վերափոխման տօնին պատարագելու համար։ Կ'կարծէին թէ՝ եթէ պատարագիչը վարդապետ կամ եպիսկոպոս չըլլայ, մարդ չի գար և կեղեցին։ Սակայն այնպէս չեղաւ, այնքան ժողովուրդ կար, որքան որ և է Սրբազանի պատարագած տարին կ'ըլլար։ Մեր հանկարելի պատարագիչը, Տ. Վահան քհնյ. Յովհաննան, քնկի գաւառացի, բաւական լաւ քարոզ մ'ալ խօսեցաւ ընաբան առնելով Ս. Գրոց սա խօսքը «Ես յո՛ հանգեայց, եթէ ո՛չ ի հեղս և ի խռնարհս»,զոր պատշաճեցուց Աստուածամօր։ Միայն ցաւալի է որ՝ միւս կղզիներու չգիտնաւորուն ժամանակացոյցին յարմարելու համար՝ եկեղեցական աւրդողութիւնը չատ կանուխ կ'սկսին հոս և պատարագը տաղաւարի օրով, 3ին կ'վերջացնեն — մինչդեռ Պոլսոյ ուրիշ եկեղեցաց մէջ դեռ նոր պատարագի կ'սկսին այդ ատեն — որով չատեր հազիւ պատարագին կէսուն և քարոզէն վերջը կրցան ներկայ գրտնուիլ, և այպէս ո՛չ միայն առաւօտեան 10ին, 11ին, 12ին կարդացուած ա՛յնքան անոյշ երգեցողութիւնը եւ ժամասացութիւնը, մեր սրբազան նախնեաց պատուական գրչի արդիւնքները, չորս պատերէն զատ լսող չունեցան, այլ և չատերը չկրցին իսկ մտիկ ընել ձաշուս չարականը, հոգեզմայլ «Մեծացուսցէ»ն, որ կ'արժէ սակայն ոչնկնդրել տարին մէկ անգամ, թէ՛ իր աքանչելի եղանակին համար, եթէ սակայն լաւ դաս տրուիր է տղայոց, և թէ ժանաւանդ իր վանէ և բանաստեղծական պարունակութեան և գողարիկ ու խանդավառ ոճին համար։ Ի ինդրոյ բազմաց կ'արտասանենք հոս այդ չարականը, որոյ մէկ առնը մէջ կը խաղցնեն ոմանք անպիտան դպրապետք, և կ'փափաքինք լսել մեր բողոքական ազգայիններէն թէ այս ոճով, ասանկ հոտով հոտով չարագրութիւն մը, երգ մ'ունի՞ն իրենց երգարանին մէջ։

«Մեծացուսցէ անձն իմ զՏէր, եւ «ցնծասցէ հոգի իմ Աստուծով Փրկչաւ «իմով (Սաղմոս)։ Անթառամ ծա«ղիկ· (*) անդաստապրտ չառաւիղ, «վերարուսեալ յարմատոյն Ցեսսեայ· (**) զքեզ Եսայիաս կանխաւ «վերագոչեաց եօթնաթռիեան չնորհաց «հոգւոյն ընդունարան գող, Աստուա«ծածի՛ն և կոյս, զքեզ մեծացուցա«նեմք։

«Հանդաճաշակ պտղոյն բանաւոր «քարուհակ, յորմէ կթեցաւ մեզ ոդ«կոյզն անապատ, յոբարութիւն տուա«մեցոյն ի ճաչակմանէ ծառոյն գի«տութեան· (***) Սրբուհի՛ անարատ, «ամենաքեան զքեզ մեծացուցանեմք։

«Ջաղաքավարեալ ի մարմնի անա«րատ վարուք, այսօր յառաքելոցն «ափիփեալ վերին անշարկութեամբ «վերափոխեցար յարքայութիւն որդւոյ «քո և Աստուծոյ մերոյ· բարեխօսա«նեմք։»

Իսկ ատոր եղանակը մտիկ ընել ուզողներուն տարօրոք գալ տարուան, եթէ Տէրը կամենայ։

*** Վերափոխման տօնին առթիւ կը յուսացուէր որ մեծ Կղզիէն բաւական թուով ընտանիք ալ այցելէին մեր եկեղեցին և այդ տեղի պերճաշուքներէն նիւթական օգուտ ելնէր թաղային մատուռին, բայց տակաւ 1—2 ընտանիք եկան միւս կղզիներէն։ Պատճառն ատուգեցինք իմացանք թէ ո՛չ այլ ինչ է, բայց եթէ ուղղայն Հայ—Հռովմէական եկեղեցւոյ վարչութեան կամ ժողովրդապետին մէկ նկիւղ—ղնիկը։ Սա հրաւիրագիր բաժնել տուեր է գլխաւոր Հայոց տուներն և օթևանները, ըսելով թէ մեր եկեղեցին հրամմեցէք եկէք, ուր ձայնաւոր պատարագ պիտի մատուցուի և յատուկ քարոզ խօսուի։ Մերայինք ալ անխտրականութեամբ և ոմանք ալ հետաքրքրութեամբ—որովհետև չզգենաւի ծախքը խնայել մտածող անձինք չին —գրեթէ ամբողջութեամբ պատասխաներ են այդ հրաւէրին։ Հիմա թո՛ղ ասոր հետ բաղդատութեան դիր սա հետեւեալ իրողութիւնը։ Անցեալ տարի բաւական թուով կաթոլիկ ընտանիք կային Գըզնալըի պանդոկներէն։ Արշաւունի Սրբազան, որ ամէն տարի ամսոյ մը չափ իր ներկայութեամբը կը պատուէ գլխաւոր օթևէը, իր չուրջը գտնուած հռովմէական ընտանիքները կ'հրաւիրէ (ընթանայի) թէ յառաջիկայ կիրակի պատարագ պիտի ընէ (կարծեմ Վերափոխման տօնին), մեր եկեղեցին հրամմեցէք։ Առանք ալ խօսք կուտան. բանը կ'իմացուի Սաքըզ Աղաճի Պաղտիրքարանը, անմիջապէս վերապատուելի մը կ'ղրկուի նոյն առաւօտ ի Գըզնալը, որ պատարագ կը սարքէ նոյն օթևէին մէջ, և չի թողուր որ իր հաւերն օտար հաւնոց ոտք կոխեն։ Նոյնքան հեռաւոր գաւառաց մէջ մեր օրով և մեր ժողովրդէն չատ փոքրաթիւ հռովմէադաւանիներուն համար մէյ մէկ եպիսկոպոսարան կար ազգեպիսկոպոսարան հաստատուցին, ուր փառաւոր եպիսկոպոսներ գացած բազմած են Մուշ, Տարբերդ Տիարպէքիր, Ա՛ն, —մինչդեռ մեր Սըրգանները և ո՛չ մէկն յանձն կ'առնու այսօր այդ տեղի հազարաւոր Լուսաւորչականաց հովուութեան հոգը, տաղտուկը ստանձնել։ Վարպետ մարդիկ են, ըսելիք չկայ։ իրենց պաշտօնն է, կոչումն է։ Ես չպիտի այպանի Մեծ Կղզւոյ ազնուապետ ընտանիքներն, եթէ իրենց մտաց, կէս ժամու ծովային հանելի ճամբորդութեամբ, Գարթալի և Իշնալըի աղքատիկ եկեղեցիները չգտնուէին, ուր եթէ ո՛չ ամէն կիրակի, գէթ ամառուան երկու տաղաւարին, կրնային դիմել և հոգեւորապէս մխիթարուիլ, լաւ քարոզ ալ լսելով (Գարթալ քաղաքիչ էր Խորով Վ. Պէհրիկեան)։

*** Օրուան հերոսը Մխիթար աբգան է իր Ծոզնէեանով, ըսելիք չկայ (մեզնէներուն մէջէն, իսկ ազգերուն մէջէն Պէրպէրեան էֆ.ին պիտի ըլլայ), և գազափարաց լծորդութեամբ մը կրնանք վերի նիւթէն այս նիւթին անցնիլ։ Զարմանալի մարդիկ ենք մէք կամ մեր գրագէտ դասը, միշտ ծայրեղ, չատ քիչ անգամ կատարեալ անկողմնակալ։ Ժամանակ մը չատ կը կարդայինք յարձակումներ Մխիթարեանց դէմ. անոնց բոլոր օգտակար արդիւնքները, գործունէութիւնն ուրացող և միայն անհաճոյ գործերը դատափետող գրութիւններ։ Հիմա ալ հոլը տարբեր ուղղութեան դարձած է և ամենայն ինչ գովեստ ներքոյ է։

Ի՞նչ հարկ մարդասիրութիւնը, գովեստը, ներքոյը չափազանցութեան տանիլ, մինչեւ հանրածանօթ դէմքերը քաշելով քաշկռտելով ձեւափոխելու և պատմական իրողութիւնները խեղաթիւրելու սահման։ Բաւ լիցի որ Մխիթար Աբբահօր և իր հիմնած միաբանութեան արդիւնքն ուրանանք, բայց եղելէ զինքն իբր Թուղ լուսաւորչական ներկայացնել, բոլորովին անքաւիր ընել որ և է լատինամտութենէ, ունիմոռական ձգտումներէ մեր նախահայրերն ազատանալէ է, Աւետիք Պատրիարքի պէս քաջակորով Պատրիարք մը, որ ծանօթ վանականն ունեցած է, «Հաւատոյ Տարածման» չանքերուն դէմ ոգորելով։ կ'ուռնանք թէ, երկու հարիւր տարի առաջները, Հռոմայ եկեղեցին բուռն և վերջին պայքար մը կ'մղէր մեր եկեղեցւոյն ինքնուրէն կացութեան դէմ. Այս պայքարին գլխաւոր վարիչներն էին, ինչպէս ամէն դպրոցական ազգ անդամ գիտեն, մէկ կողմէ պապական նուիրեալն ի Պոլիս, իրենց ներով հասկ, և միւս կողմէ Աւետիք Պատրիարք ի գլուխ Հայոց մեծաւոր նուիրեան։ կիրքերն ալ սաստիկ գրգռուած էին. մէկ կողմը զմիւսը ֆրանկաչել, սա ալ զմիւսը հերձուածող, հերետիկոս տիտղոսներով կ'մկրտէր անդադար։ Եթէ աւելի քաղաքակրթեալ, աւելի հանդարտ ժամանակներու մէջ ֆրանսերէնով կ'ուրանան Մխիթարեանց հակառակորդ մը, գարժանալի չէ որ մերայինք ալ ժամանակին անուանած ըլլան զԱբբան «Ձէյ Մէնթոր Սե-ըզ-ցին», որ Հայոց Պատրիարքին դէմ եղնելով՝ հակառակ կողմը փախած, Լատինաց եկեղեցին ապաստանած էր, այսու արդարացնելով իրեն դէմ եղած ամբաստանութիւնքը։ Շատ հեռուն չերթանք. եթէ Մխիթար Սբրա չերմ ուղղափառ Հայ վարդապետ էր և այնպէս մնաց ցվերջ, ինչո՞ւ ազգն շատ հողի վրայ դնելէն, որով և Պոլսոյ Պատրիարքին հոգեւոր իշխանութենէն դուրս նետուելէ վերջը, միաբանութիւն հիմնելէն վերջը, Հայոց կաթողիկոսութեան հետ, Հայ. եկեղեցւոյ ծէսին հետ որ և է յարաբերութիւն չհաստատեց, դիմում մը չըրաւ, այլ անոր հոգեւոր իշխանութիւնը քիչ քիչ մէկդի նետուց։ Մեր օրերը Շանթազարեան կաթողիկոս վարդապետ եւս և Գարեգին Մուրատեանց սարկաւագ (այժմ Մելքիսեդեկ Սրբազան) հալածուելուն էմիմածնէն, բայց ասոր համար կաթողիկոսց կամ բողոքականաց քով չպատասանեցան։ Մինչդեռ ուրիշներ, նման պարագայից մէջ, (Սանասարեան Սահակ և Գաւրիէ Ներսպասէ եպիսկ.) Հռովմ պատասանեցան։ Գիտենք որ ներկայ դարուս սկիզբները Վենետիկ տպուած գիրքերուն ճակատն Լիւմինաց կաթողիկոսաց անուան յիշատակութիւնը կ'ըլար, բայց ասիկայ լոկ ընթերցողաց մեծամասնութեան, որ Լուսաւորչական էին և են ցարդ, աչքին փոշի ցանելու համար ժտածուած բան մ'էր կրնանք ըսել, քան թէ իրական հպատակութեան նշան։ Վերջէն այդ ալ դադրեցաւ, որով Մխիթարեանք դիմակը բոլորովին վար առին։

Նմանապէս յետագայ Մխիթարեանց ժամն եղած հրատարակութիւնք կողմնակցութիւն կ'ըտնէին։ Հայր Ինճիճեան իր նշանաւոր հնագէտ մը ցոյց կը տրուի, առանց գոնէ յիշելու թէ իր հնագիտական ակղունքներէն շատն ոգորմելի բաներ էին, պարզ ընդօրինակութիւնէն դուրս նետուելէ վերջ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ի. ՊԱԼԱՆԴ, Օ.ԳԵՐ. 29/11 Ս.ՏԱՒԱ.

Ինչպէս ամէն տեղ, այնպէս ալ Ամերիկայի մէջ գրական հրատարակութիւնները կը կազմեն առանձին մի ճիւղ, որ ունի իր յատուկ պայմանները, իր յատուկ սովորութիւնները։ Ամերիկացի հրատարակիչները ամէն տարի կը հրատարակեն հազարաւոր գրքեր, որոնց մեծ մասը կը կազմեն վէպերը։ Ամերիկացի հասարակութիւնը կը սիրէ կարդալ, բայց ոչ թէ ինչպէս մենք, որ կարդալու համար ժամանակ չունինք, այլ ինչպէս անգլիացիները, որոնք կարդալու համար ժամանակ կը գտնեն։ Ամերիկացին կարդալու համար ժամանակ չունի, ուստի ամերիկացի հրատարակիչները ստիպուած են իրենց գրքերը հրատարակել այնպիսի ձեւով, որ ամերիկացին կարդալու ժամանակ չունենայ։ Ամերիկացին կարդալու ժամանակ չունի, որովհետեւ ամէն ժամ, ամէն վայրկեան կը կորցնէ իր դրամը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԳԻՏՈՒԹԻՒՆ, ԱՐՈՒԵՍՏ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ»

Տարեկան բաժանորդագին՝ Ամերիկայի մէջ 5 տոլար, Եւրոպայի մէջ 25 ֆրանկ։ Ամսական բաժանորդագին՝ Ամերիկայի մէջ 50 սենթ., Եւրոպայի մէջ 2 ֆրանկ։ Առանձին օրինակ՝ 5 սենթ.։

Ամերիկայի մէջ բաժանորդագրութիւնները կ՚ընդունին Պոսթընի «Հայկական Ստանդարտ» գրատունը եւ անոր գործակալները։ Եւրոպայի մէջ՝ Պոլսոյ «Հայկական Ստանդարտ» գրատունը եւ անոր գործակալները։

Հասցէ՝ Ամերիկայի մէջ՝ Boston, Mass., U. S. A., P. O. Box 317

Եւրոպայի մէջ՝ Constantinople, Galata, Mouradié Han, 3—2

ԴԱՏ

ԱՐՔԻՊԱՆԱՑ ՎԻՃԱԿԸ

Մայրենի մասամբ Շահնամէ Տիրատէրեան

Ք. Տ. — 1870—1902

Ք. Տ. — Ա՛ր ինչ ըսել է ան։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ծնած է, ապրած է, մեռած է։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր ուրախութիւնները եւ իր տառապանքները։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր յոյսերը եւ իր յուսախաբութիւնները։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր սէրերը եւ իր ատելութիւնները։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր ընկերները եւ իր թշնամիները։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր յաղթանակները եւ իր պարտութիւնները։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր ծիծաղն ու իր արցունքները։ Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր կեանքը։

Ինչպէս ամէն մարդ, ան ալ ունեցած է իր կեանքը։